Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Անգլիական գրականություն, Բրիտանական գրականություն, Պատմվածք, Արձակ
13+
Թարգմանիչ՝ Անի Կլչյան

Դեյվիդ Լոուրենս
Լեռների մեջ մի մատուռ ու մի մարագ

Հաճելի է, իհարկե, ինքնամոռաց թափառել Թիրոլում: Տխուր նստած եմ անկողնում, գլուխս և ուսերս բարձի հսկա քուլաներից դուրս են ցցվել, ինչպես քերովբեն՝ ամպերից, գրում եմ ուղղակի բարկությունից, իսկ մյուս անկողնում պառկած Անիտան երանության մեջ է:

Երկու օր առաջ սկսեց անձրև գալ: Երբ մտածում եմ այդ մասին, զարմանում եմ. երկնքի ջրհորդանները, կարծես, կախվել են թիրոլյան Ալպերի գլխին:

Մենք ճամփա ընկանք սիրավեպի ծիածանափայլ ամպիկը մեր առջևն առած, որ տանում էր մեզ հարավ՝ Իսարից դեպի Իտալիա: Այնքան էլ հեռու չէինք գնացել, երբ գույնզգույն ամպիկը վերածվեց անվերջանալի տեղատարափի և դեռ շարունակում է տան շուրջը մաղել:

Չեմ խոսում ճամփա ընկնելիս մեր խանդավառության մասին՝ Իսարի դաշտի մութնուլուսին, նախաճաշից առաջ, երբ կապույտ եղերգակները ապշահար բացվել էին ճանապարհի երկու եզրերին: Ոչ էլ կնկարագրեմ, թե ինչպես կեսօրին դեռ քարշ էինք գալիս լեռնալանջերին, իսկ անձրևը մեր ծռմռված ծղոտե գլխարկների եզրերից ծոծրակով հոսում էր ներս ու պարուսինե ուղեպարկերից անգթորեն կաթում կրկնակոշիկների մեջ: Ամոթով մտանք ճամփեզրի պանդոկը,

ուր յոթ կարմրաթուշ, զվարթ գեղջուկ տղաներ, երեքը՝ համակրելի, իրենց սրտերը ողջակեզ արեցին Անիտայի պատվին, մինչ ես մի անկյունում նստած քամվում էի:

Երեկ, համաձայն եմ, կեսօրին և երեկոյան հրաշալի էր: Ձրվեժի մոտ, դեղին, գլխահակ պատկառուկների մեջ թեյ եփեցինք, մինչ մի խումբ հետաքրքրասեր սարեր գագաթները տնկել էին նայելու, իսկ Իվանհուի պես զինավառ, խոշոր ու կանաչ մի ծղրիդ՝ անուշիկ մուգ թանաքագույն բոգախոտի վրայով թռիչք կատարեց դեպի հավերժությունը: Համենայն դեպս ես այլևս չտեսա նրան:

Մեզ ասել էին, որ սարի վրայով Գլասիյութ տանող երեք ու կես ժամվա ճանապարհ կա: Կար... մի խուլ արահետ, իսկ ներքևում՝ կարմիր աստղերի պես անթիվ-անհամար ելակներ ու մի քանի գորշագույն հապալասի: Մենք մի ահագին թեք բարձունք ելանք ու մյուս կողմից սղալով իջանք ցած՝ սոճու անտառը: Այստեղ խոնավ էր, մութ ու ճնշող: Սակայն երբ մարդ ոտքով է ճամփա ընկնում, պետք է դիմանա, ստիպված է դիմանալ: Այդպես, մի ժամ ևս չարչարվելով, անցանք մութ, խոնավ ու մռայլ զառիթափի երկայնքով, եղևնիների արանքով նայելով անդունդի մյուս կողմը՝ մեկ ուրիշ զառիթափի՝ սև, մռայլ, սպառնալից ու նույնքան վանող: Երկու ժամ շարունակ սայթաքում ու մաքառում էինք, բայց դեռ դոփում էինք նույն տեղում՝ ականջ դնելով ջրի շառաչին, որ սպառնալից ու որոտընդոստ գալարվում էր որոգայթի միջով:

Մեր ջանքերի միօրինակությունից ու հոգնությունից կամաց-կամաց սսկվեցինք ու սկսեցինք քրտնել: Ուսապարկը ևս, որքան էլ հավատարիմ ուղեկից թվա, երբեմն դավաճանության պահեր ունի: Ասենք, համոզված ես, որ որևէ ծառի լպրծուն արմատը վարպետորեն կարող ես հենարան ծառայեցնել: Ցատկում ես, բայց ետևից քեզ ծաղրող ուսապարկն այնպես է հրում, որ երեսնիվայր փռվում ես գետնին:

Իսկ արահետն արահետ էր, որ կար: Կտուրի պես դիք մթին զառիթափի լանջն անթիվ-անհամար ջրափոսերով էր ծածկված, որոնց ջրերը փորձում էին այնտեղից դուրս ծորալ ու առվակներ հորջորջվել, բայց չէին կարողանում: Այս ճահճուտի վրա եղևնու ոստերից մի հին ծածկույթ էր փռված՝ երերուն ու խաբուսիկ: Եվ սա, իբր, արահետն էր: Հանկարծ եղևնու ոստերն անհետանում էին, և շվարած մնում էիր զառիթափի տիղմի մեջ: Ես շփեցի ճակատս:

— Ինչ շուտ ես հուսահատվում,— ասաց Անիտան: Ես մի կողմ քաշվելով, առաջնորդությունը զիջեցի նրան:

Քիչ ավելի վար նա մեկ ուրիշ շավիղ հայտնաբերեց:

— Տեսա՞ր,— ասաց շրջվելով իմ կողմը: Ես չպատասխանեցի: Նա սկսեց մի երգ դնդնալ, որովհետև իր ճամփան զառիվար էր: Հետո դա էլ անհետացավ բարձրաձայն փնչացող քչքչան առվակի մեջ ու էլ չերևաց:

— Հը՛, ի՞նչ եղավ,— ասացի ես:

— Ախր ո՞ւր կորավ,— ասաց նա սրտնեղած ու զայրացած:

— Տեսնո՞ւմ ես, նույնիսկ քո ճամփան ոչ մի տեղ չի վերջանում:

— Ատում եմ, երբ սկսում ես քարոզել,— բռնկվեց նա,— բացի այդ՝ այն ինչ-որ տեղ վերջանում է:

— Համենայն դեպս,— ասացի ես,— չենք կարող քնել քո այդ ճանապարհի վերջին:

Ես մի ուրիշ ճամփա բռնեցի, բայց այս անգամ՝ զգույշ, առանց ոգևորության: Գնում էինք լուռ ու մունջ: Բայց այս մեկն էլ անհետացավ նույն քչքչան առվակի մեջ:

— Ո՜ւֆ, այդպիսի տեսք մի ընդունիր,— բացականչեց Անիտան:

Ստիպված, նրա ցեխակոլոլ շրջազգեստի փեշերի ետնից ընկած, զառիթափի խոնավ ու մութ դիմադրությունը հաղթահարելով, ևս մի անգամ մագլցեցի վեր: Մենք մի ուրիշ ճամփա գտանք ու նորից հետքը կորցրինք ուրախությունից գլուխը կորցրած առվակի մեջ:

— Գուցե պետք էր այն կողմն անցնել,— անվստահ ասացի ես, երբ կանգ առանք ջրի ափին:

— Ախր ինչո՞ւ... ինչո՞ւ ճամփա ելա քեզ նման անճարակի հետ,— բղավեց նա,— քեզ կարելի է անընդհատ բոթել, բայց դու ծպտուն չես հանի:

Ես զարմացած նայեցի նրան ու շուռ եկա դեպի գետակը, որ նենգորեն հիշեցնում էր իր մասին: Չորս կողմը քարաժայռեր, դավադիր ջրի փրփրաբաշ ճողփյուն, շռինդ ու շառաչ: Անձրևանոցս գցեցի ուսապարկին ու հանդգնեցի ջուրը մտնել:

Հանդիպակաց ափը շատ դիք էր ու բարձր: Մթին կիրճը կլանեց մեզ, քաշեց-տարավ դեպի հատակը: Անձրևանոցն ուսապարկիս գցած, նայելով վեր, սկսեցի չորեքթաթ մագլցել, շրջանաձև, որպեսզի ծանրությունը չխանգարի: Սայթաքում, կառչում ու տնքում էի անընդհատ:

Իսկ ներքևից ալիք-ալիք ծիծաղ էր թնդում: Հասա պռնկին ու ցած նայեցի: Ոչինչ չէր երևում, միայն հռհռոց էր հասնում ականջիս:

— Ի՞նչ է պատահել,— կանչեցի ես: Բայց ձայնս խլացավ ջրի քչքչոցի մեջ: Դե ես էլ, պռնկի վրայով սողալով վեր, նստեցի մռայլ միայնության մեջ:

Անմիջապես ականջիս հասավ նրա սուր, սարսափահար ճիչը:

— Հե՜յ, ո՞ւր ես:

Սիրտս նույն պահին թունդ ելավ ու նվաղեց:

— Արի՛ այս կո՛ղմ,— կանչեցի ես, գոհ, որ այս մռայլ միայնության մեջ կա մի կետ, որին կարելի է ձայն տալ:

Նա տեղ հասավ՝ վերելքի թեքությունից ու շրջապատի ամայությունից վախեցած, շնչասպառ։

— Կարող էի այլևս բոլորովին չգտնել քեզ,— ասաց նա։

— Իսկ ես չէի ուզում, որ ինձ կորցնես,— ասացի ես։ Նա նստեց, և շուտով գլուխը սկսեց տմբտմբալ, կուրծքը ցնցվել, և մի քիչ հետո արդեն գժի պես հռհռում էր՝ առանց ինձ։

— Հը՞, ի՞նչ է եղել,— ասացի ես։

— Դու... դու ուղտի էիր նման՝ սապատավոր, մագլցող ուղտի...— քրքջում էր նա։

— Ավելի լավ է ճամփա ընկնենք,— ասացի ես։ Նա սայթաքում էր, հռհռում ու չարչարվում։ Վերջապես հասանք մի գեղեցիկ, կուսական ճանապարհի։ Դա գետի նախկին հունն էր, որն այլևս այստեղով չէր հոսում։ Անհամար ողորկ գլաքարերը մթության մեջ ցույց էին տալիս զառիթափով վեր տանող ճամփան։

— Արդեն դուրս ենք գալիս,— ասաց Անիտան՝ առաջ նայելով։ Ես ինքս էլ լիովին համոզված էի, որ դուրս ենք գալիս։ Բայց մի ժամ շարունակ վեր բարձրանալուց հետո դեռ հարթ գլաքարերով հունի մեջ էինք, ստվերոտ ծառերի միջև, սարերի փեշերին։

Անիտան կեղևաշեն մի որսորդական հոլիկ տեսավ ու գնաց հետախուզելու։ Գիշերը վրա էր հասնում։

— Չեմ կարողանում ներս մտնել,— անորոշ կանչեց նա։

— Ուրեմն ետ արի,— ասացի ես։

Բաց անտառում քնելու համար շատ ցուրտ ու խոնավ էր։ Բայց նա գալու փոխարեն գորշ մթնշաղում կռացավ ելակ քաղելու։ Ես սպասում էի՝ որպես մարմնացյալ մոլեգնություն։ Բայց նա իր կամակորությունից գոհ, անհոգ ու անտարբեր, ստվերների մեջ ելակ էր փնտրում։

— Մենք անպայման պետք է գիշերելու տեղ գտնենք,— ասացի ես և իմ ծայրաստիճան վճռական տոնը վերջապես ազդեց։

Նա հասկացավ, որ ես էլ իր նման մոլորվել եմ սարերում, և որ անդնդախոր կիրճերը, մութն ու գիշերը շրջապատում են մեզ, և ոչ մի հնար չունենք, թեկուզ երկուսով, պաշտպանվելու սարերի ցրտից ու ամայությունից։

Եվ այդպես՝ ձեռք ձեռքի տված, լուռ ու մունջ, քայլեցինք վեր։ Անիտան մոտ հարյուր անգամ հավատացած էր, որ դուրս ենք գալիս։ Ի վերջո նա էլ վհատվեց։

Հետո, մթության մեջ, ճամփեզրի նոսրացող եղևնիների արանքում մի խրճիթ նկատեցինք:

— Փայտահատի խրճիթ է, երևի,— ասաց նա:

— Աղոթարան է,— պատասխանեցի ես: Այս անգամ, գոնե, ես ճիշտ դուրս եկա: Դա փայտաշեն խրճիթի իսկական նմուշ էր՝ դռանը կախ տված սև, թոշնած ծաղկեպսակով:

Բարձունքի լեռների սառը, աչալուրջ լռության մեջ չրխկաց փականն, ու մենք ներս մտանք:

Դրսից թափանցող գորշ մթությամբ սկսեցինք մի կերպ զանազանել փոքրիկ զոհասեղանը, խորանի ջահերը, պատերից կախված նկար-զոհաբերությունների բազմությունն ու աղոթքի չորս փոքրիկ նստարանները: Եվ ամեն ինչ տեղը տեղին ու կոկիկ, ոնց որ տուփի մեջ:

Լեռնային այս եզակի ապաստանում ինձ լիովին ապահով զգալով ու ներշնչված՝ երկյուղածությամբ վառեցի կանթեղները՝ բոլորը, հերթով: Բոցը մեկ առ մեկ առկայծում էր գիշերվա մեջ: Ընդամենը վեց հատ էին: Հետո հանելով գլխարկս և ուսապարկս, փառավորվեցի՝ սիրտս հանգիստ, ինչպես սեփական տանս:

Մատուռի պատերը խիտ շարքով պատած էին փայտի վրա գյուղացիների ձեռքով արված ու նեղ շրջանակներով եզերված պարզ, անպաճույճ նկարներով՝ բոլորը գունավոր: Նայեցի շուրջս, տեսա կանաչ մարգագետիններում արածող կովերին ու ձիերին, իրենց տանը ծունկ չոքած մարդկանց և ուրախ էի, կարծես ինձ գտել էի հրեշտակների ընկերակցության մեջ:

— Ինչ լավ է՝ բախտներս բերեց,— ասացի Անիտային:

— Բայց ի՞նչ պիտի անենք,— հարցրեց նա:

— Կքնենք հատակին՝ նստարանների արանքում: Տեղը կհերիքի:

— Բայց ինչպե՞ս պիտի քնենք փայտե հատակին,— ասաց նա:

— Ի՞նչ ավելի լավ բան կարող ես առաջարկել:

— Մարագ: Այստեղ մոտերքում պետք է մարագ լինի: Այստեղ քնել չենք կարող:

— Այո, իհարկե,— ասացի ես:

Այնինչ ուզում էի դիտել այդ փոքրիկ նկարները: Բարձրացա նստարաններից մեկի վրա: Անիտան կանգնել էր բաց դռների մեջ՝ որպես անմխիթար հրեշտակը նախաստեղծ: Վեց մոմերի աղոտ լույսը թրթռում էր նրա դժգոհ շուրթերին: Նրանից այն կողմ եղևնիների հազիվ լուսավորված ճյուղերն էին երևում, և ապա՝ գիշերը:

Նա շրջվեց ու հեռացավ՝ լուծվեց, ինչպես մութը մթության մեջ: Ես լսեցի նրա ոտնաձայները քարերի վրա: Հետո շրջվեցի դեպի նկարները, որոնք շատ էին դուր եկել ինձ: Աղոթարանի նստարաններին թառած՝ նայում էի հերթով մեկին, հետո՝ մյուսին: Դրանք նկար-նամակներ էին, որոնցով հոգիս, կարծես, զրույց էր անում ինքն իր հետ: Դրանք, իրոք, աստծուն նվիրված փոքրիկ նկարներ էին, որովհետև թե՛ ձիերը, թե՛ կովերը, թե՛ տղամարդիկ ու կանայք և թե՛ սարերը. բոլորը Բարձրյալի լեզուն էր: Ինչպե՞ս կարող էր նա վարժապետի պես գերմաներեն, անգլերեն կամ ռուսերեն կարդալ: Գյուղացիները կարող էին վստահ լինել, որ նա կհասկանա իրենց նկարները, նրանք այնքան էլ համոզված չէին, որ նրան կհետաքրքրեն իրենց ձեռագիր տեքստերը:

Ես, բաց կապույտ մի նկար էի նայում: Մի ննջասենյակ էր պատկերված, անկողնում պառկած էր մի կին, իսկ քիչ այն կողմ, օրորոցում պառկած էր երեխան: Անկողինը կապույտ էր ու կարծես դուրս էր ընկնելու նկարի միջից. դրանից մեջս վախի զգացում առաջացավ: Բացի այդ՝ հեռավորության հետ անկողնի սնարը տհաճ կերպով մեծանում էր: Կինը պառկած ուղիղ ինձ էր նայում բաց կապույտ զոլերով հսկայական վերմակի տակից: Նրա վարդագույն դեմքը փենսանոց տիկնիկի նման կլոր էր՝ նույնպիսի կլորավուն արտահայտությամբ: Եվ մանկիկն էլ՝ վարդագույն դեմքով ֆարդինգանոց /Ֆարդինգ — մեկ չորրորդ փենս:/ տիկնիկի պես, նայում էր նույն կլորավուն հայացքով:

«Maria hat geholfen E. G 1777.» /Maria hat geholfen — Մարիան ազատվեց:/:

Ես նայում էի նրանց և գիտեի, որ ես ամուսինն եմ, որ նայում ու զարմանում է: Գ.-ն՝ ամուսինը նկարում չէր երևում: Նրա ցանցաթաղանթին արտացոլված փոքրիկ պատկերից էր վերարտադրված այս նկարը: Նրան չէր հաջողվել ի մի բերել ու մեկնաբանել դրա իմաստը. կնոջը՝ երկունքի ցավերով գալարվելիս և ապա՝ խաղաղված ու հանգիստ, օրորոցում պառկած երեխայի հետ: Նա չէր կարողացել գլուխ հանել այդ ամենից: Բայց կարողացել էր գոնե վերարտադրել և հայելու պես կախել այն աստծո աչքերի առջև, վավերացնելով փաստը, անգամ եթե չէր կարողացել գտնել բացատրությունը: Եվ նա բավարարված էր: Ու կամա թե ակամա՝ ինքս էլ նույն վիճակում էի ինձ զգում՝ չնայած իմանալու ցանկությունից սիրտս սկսել էր ավելի արագ բաբախել:

Տղամարդիկ, մինչև փորձանք չպատահեր, չէին գիտակցում իրենց, բայց երբ նրանց կյանքին վտանգ էր սպառնում, այնժամ ինքնագիտակցության ահավոր բռնկումներ էին ունենում, որ նրանց հանգիստ չէր տալիս այնքան ժամանակ, մինչև չէին հանձնում այն կտավին: Աղետի պահին նրանք ներկայացնում էին իրենց ամեն տեսակ տարօրինակ դիրքերով:
Ջոզեֆ Ռիեքն, օրինակ, ուր որ է մեջքի վրա էր փռվելու, ինչպես ֆուտբոլիստը շատ բարձրից հարված կատարելիս կորցնում է հավասարակշռությունը: Ձախ արմունկին մի ահագին մոխրագույն քար էր ընկել, որ կարող էր անգամ սպանել նրան, և մեծ քանակությամբ արյուն էր բերել՝ նարնջագույն արյուն, կամ էլ այդպես էր թվում կանթեղների լուսավորությամբ, մինչ սուրբ Մարիամն, ամպերի քուլաներով շրջապատված, կանգնած էր վերևում՝ թեթևակի զարմացական տարածած ձեռքերը:

«Joseph Rieck
Gott sey Danck gasagt 1834:»

Տարօրինակ էր, որ նա աստծուն իր երախտագիտությունն էր հայտնում նրա համար, որ արմունկին քար էր ընկել: Բայց գուցե երախտապարտ էր, որ գլխի՞ն չէր ընկել: Կամ, գուցե, որ արմունկն առողջացե՞լ էր: Չնայած՝ նկարից դատելով, հարվածը բավական ուժեղ էր եղել: Նրա մտքով չէր անցել շնորհակալ լինել աստծուն, որ իր ծննդյան հենց առաջին օրը Թիրոլի բոլոր լեռները չեն փլվել գլխին: Այդ ոչ մեկիս մտքով չի անցնում: Մենք սպասում ենք, որ մի մեծ քար ընկնի մեր արմունկին, հետո գույնզգույն նկարներ ենք անում և ասում. «Հենց ապրելիս մահվան մեջ ենք» և երախտապարտ ենք լինում երկնավորին, որ մահից խուսափել ենք: Տարբեր-տարբեր մարդիկ ասում էին՝ «Gott sey Danck» /Gott sey Dank - Շնորհակալ եմ աստծուց, երախտագիտությունս եմ հայտնում աստծուն:/, որովհետև կամ մեծ քարեր էին ընկել նրանց վրա ու ջարդուխուրդ արել, կամ ծառեր էին տապալվել, կամ նրա համար, որ գլորվել էին ժայռերից կամ էլ՝ քշվել ջրի հոսանքով բոլոր այն «անհշան» առիթներով, որ ստիպել էին բացականչել. «Փառք աստծո՝ դեռ ողջ եմ»:

Կանանցից մի քանիսն էլ աղոթքի նկարներ ունեին, որոնք հուզիչ էին, որովհետև դրանք աղոթքներ էին ոչ թե իրենց, այլ ուրիշների՝ իրենց զավակների համար: Մենախցի պես մի տեղ ծունկ էր չոքել Եկատերինայի հագուստներով մի կին, նրա դիմաց Վեյքֆիլդի վանականի պես հագնված մի տղամարդ: Նրանց միջև քարե պատերից երկու հաստ երկաթե շղթաներ էին կախված՝ ծայրերից ճոճվող երկաթե օղակներով: Սրանցից վեր, ամպերի ձվաձև շրջանակի մեջ, խաչված Քրիստոսն էր, իսկ նրանից էլ վեր՝ մի կարճլիկ Մարիամ, Վիկտորիա թագուհու պես մի բան, գլուխը ծածկող խիստ կապույտ շղարշով, որ ալիքվելով ցած, պարուրում էր նրա ամրակազմ մարմինը: Նա՝ սուրբ մայրը երկնավոր, վշտացած էր երևում: Խուցի մեջ ծունկ չոքած կինը երկինք էր կարկառել ձեռքերն՝ ասելով.

«O Mutter Gottes von Rerelmos, Ich bitte mach mir mein Kind von Gefagenschaft los mach im von Eissen und Bandten frey wansz des Gottliche Willen sey.
Susanna Grillen 1783.» /O Mutter Gottes von Rerelmos... Ով սուրբ Միածին, աղաչում եմ, շուտ ազատիր որդուս գերության երկաթե շղթաներից:/

Կարծում եմ՝ հերր /Հերր - պարոն, գերմաներենում արական սեռի ցուցիչ է:/ Գրիլլենը գիտեր, որ դա Մարիամ Աստվածածնի գործը չէր: Խեղճ Սյուզաննա Գրիլլեն... Կանացի ու բնական էր նրա կողմից իրական ուժերը նույնացնել հավերժականի հետ: Ինձ պարզ չէր, սակայն, թե որդին իրոք որևէ մեղք էր գործել, թե պարզապես դքսի, թագավորի կամ հանրույթի կողմից սահմանված որևէ օրենք էր զանց առել: Կարծում եմ՝ խեղճն ինքն էլ չգիտեր՝ ինչպես զանազանել: Բայց հայրն, ակնհայտորեն, գիտենալով, որ այդ ծանր կացությունը ժամանակավոր է, չէր շտապել օգնություն հայցել նախախնամությունից:

Պետք էր ուսումնասիրել Թիրոլի 1783 թվականի պատմությունը:

Նկարներից մի քանիսն ընտանեկան ուղերձներ էին, բայց վճռական ձայնը միշտ մորն էր պատկանում: Մարի Շնիբերգերը շնորհակալություն էր հայտնում

աստծուն՝ որդուն բուժելու համար: Նա ծունկի էր իջել ննջասենյակի մի կողմում՝ երեք դուստրերը ետևը: Շնիբերգերը ծունկի էր իջել նրա դիմաց՝ որոշ հեռավորության վրա, իսկ ետևը միակ որդին: Կույս Մարիամը ճախրում էր նրանց երախտագիտության վերև: Այս անգամ ամբողջ ընտանիքներ էր միավորվել՝ փառաբանելու երկնային ուժերը, որ վատն ավելի վատի չէր փոխվել: Եվ երկնային ուժերի հանդեպ ամուսինը զատ էր կնոջից, դուստրը՝ որդուց, քույրը՝ եղբորից. մեկ խումբը մի կողմ, մյուս խումբը՝ մյուս, մեկուսացած նախաստեղծ գթության կամ նախաստեղծ երկյուղի հանդեպ:

Նկարների վերջին խումբը գոհաբանական աղոթքներ էին աստծուն՝ գույքի փրկության համար: Մի տիկին վեց կով ուներ՝ բոլորը կարմիր, նկարված մարգագետնում, լեռների փեշերին արածելիս: Այս կողմերում տեսածս բոլոր կովերը մոխրաշագանակագույն կամ բաց դարչնագույն էին: Բայց սրանք, խնդրեմ՝ կարմիր էին: Եվ տիրուհին ի սրտե երախտապարտ էր աստծուն, որ վերադարձրել է այն, ինչ հինգ օր շարունակ կորած էր եղել, այսինքն՝ իր վեց կովերն ու փոքրիկ հովվուհուն՝ Քեյթլին: Փոքրիկ աղջիկը ո՛չ նկարում կար, ո՛չ աղոթքներում, միայն հիշատակվում էր, որ կորել էր կովերի հետ միասին: Այդպես էլ չիմացա, թե ինչ էր եղել նրան: Կովերը միշտ էլ կարող էին խոտ ուտել: Երևի կթել էր անասուններին ու լոռամրգին էլ, երևի, հասած էր: Բայց հինգ օրն, ըստ երևույթին, երկար ժամանակ է եղել խեղճ Քեյթլի համար:

Մարգագետիններում հարյուրավոր անասուններ էին նկարված՝ «Նոյյան Տապան» խաղալիքների պես շարվեշար, խումբ-խումբ կանգնած. մի խումբ կարմիր կով, մի խումբ շագանակագույն ձի, մի խումբ շագանակագույն այծ, ու մի քանի մոխրագույն ոչխար. կարծես բոլորը խմբավորված լինեին ըստ տեսակի: Իսկ Մարիամն՝ ամպերի միջից, օրհնում էր նրանց: Սակայն հիերոգլիֆների պես շարված այդ կենդանիները մի զորեղ ուժ էին խորհրդանշում: Դա պարզապես ունեցվածք չէր, այլ կենդանական այն հրաշք աշխարհը, որ մարդուն իբրև սնունդ է տրված: Ըստ կարգի, այդպես շարված՝ նրանք գրեթե երկյուղ էին ներշնչում, կարծես, բանակի նման կարող էին տապալել մեզ:

Կանանցից միայն մեկն էր փորձանքի եկել: Նա նկարված էր աստիճաններից ցած գլորվելիս, ճիշտ այն պահին, երբ վայրէջք էր կատարում իր խաղաղ խոհանոցի հատակին, ուր վառարանի մոտ քուն էր մտել փիսիկը: Փիսիկը շարունակում էր քնած մնալ, բայց Մարիամը, կապույտ թիկնոցով պարուրված, երդիկից երևում էր թեթևակի հուզված ու դժգոհ:

Բոլոր կանանց մեջ, այն կանանց, որ տառապել էին երկունքի ցավերով կամ տանջվել իրենց զավակներից մեկնումեկի պատճառով, բոլոր այդ կանանց մեջ այս կինը միակն էր, որ աստիճաններով գլորվել-ընկել էր խոհանոց, ուր հանգիստ քնած էր կատուն: Ինչպես երևում է՝ նա երեխաներ չուներ: Համենայն դեպս ներքևի աստիճաններին թրմփալիս նրա վիճակն աննախանձելի էր:

Ներքևի դաշտավայրի այդ գյուղացիները... ահա նրանք՝ պատկերված իրենց երկյուղի մեջ, իրենց նկար-զոհաբերություններում, որոնք իմ կարծիքով, կանայք էին պատվիրել ու վճարել: Նրանք ապրել են լեռնալանջերին, ուր միշտ վախն է իշխել: Երբեմն նրանք իմանում էին, թե ինչպես է նա խնայել որևէ տղամարդու կամ

կնոջ: Հետո այս մարդն այլևս հանգիստ չէր գտնում այնքան ժամանակ, մինչև որ կնկարեր իր վախը, կներկայացներ ինքնիրեն բռնված սարսափի ճիրաններում և կընծայեր այն կուռքին՝ Սարսափին, անանուն այն աստվածությանը, որի ուժը պետք էր լուռ ճանաչել և ընդունել, մինչդեռ միևնույն նկարում ավելի գթասիրտ Երկնային Ողորմածությունը պատկերվում էր, կոչվում էր անունով ու երկրպագվում: Լեռների մթության մեջ, ամեն ինչից խոր-հավերժական սարսափն էր: Բոլոր աստվածներից ամենաառաջինն այն անհայտ աստվածս էր, որ ամեն վայրկյան ճզմում էր կյանքն ու մշտապես սպառնում նրան: Նրա ստվերը դաշտերի վրա էր: Ու նրան անխոս ընդունելու և հնազանդության վկաներն էին այդ նկար-զոհաբերությունները՝ ստեղծված վախից ու նվիրաբերված Տիրոջն՝ առանց անվանելու նրան իր անունով: Մինչդեռ, բոլորի դիմաց Մարիամն էր՝ Երկնային Գթությունը, նա, ով տառապել էր ու գիտեր: Եվ այն, ինչ տառապել էր ու գիտեր, հաղթողն էր, և բացեիբաց էր երկրպագվում: Բայց այն, ինչ ո՛չ գիտեր, ո՛չ տառապել էր՝ անանուն երկյուղը, որ նշան առնելով, մի փոքր վրիպել էր. սրան պետք էր թաքուն երկրպագել: Հանուն հոգու փրկության մարդը պետք է ընդունի սեփական վախը, ընդունի իր իշխանությունից դուրս՝ նրա իշխանությունը:

Մինչ ես կարդում էի պատի վրայի՝ բարձրում արված արձանագրությունները, Անիտան վերադարձավ: Նա հողմածեծ պանամա գլխին դժգոհ կանգնեց ներքևում:

— Քիչ հեռվում մի փառահեղ մարագ կա,— ասաց նա:

— Մի րոպե ջահն ինձ չե՞ս տա,— խնդրեցի ես:

— Բաց տարածության վրա խոտով լի հսկա մի մարագ: Ես ներսը մտել եմ:

— Կբարեհաճե՞ս մի րոպեով ջահն ինձ տալ:

— Դե ահա, արի գնանք, վերջապես...

— Միայն այս մեկը կարդամ... ջահն այստեղ տուր:

Լուռ անհամբերությամբ նա ինձ մեկնեց կերոններից մեկը: Ես մի փոքրիկ արձանագրություն էի նայում:

— Չե՞ս գալիս,— հարցրեց նա:

— Նույն հաջողությամբ կարող էինք այստեղ գիշերել,— ասացի,— այստեղ և՛ չոր է, և՛ այնպես ապահով:

— Դե ահա,— նեղացած բացականչեց նա,— դու արի մարագը տես...

— Մի րոպե,— ասացի ես:

Նա շրջվեց:

— Ինչ լավն է, չէ՞, այս զոհասեղանը,— բացականչեց նա,— թղթե փոքրիկ սիրունիկ վարդերն ու զարդերը...

Նա ինչ-որ արհեստական ծաղիկներ էր տնտղում՝ նպատակ ունենալով դրանք մազերի մեջ խրել: Ես վար ցատկեցի՝ ասելով, որ կշարունակեմ կարդալ առավոտյան: Այդպես ուրեմն՝ հավաքեցի ուսապարկս ու նայեցի դռան մոտի նվիրատվության արկղիկի մեջ: Տուփը բաց էր ու վեց կրոյցեր /Կրոյցեր, պֆենինգ — գերմանական մանրադրամ:/ էր պարունակում: Ես իմ աղքատիկ գրպանից քառասուն պֆենինգ ավելացրի՝ վճարելու մոմերի համար: Հետո Անիտային այսկողմ կանչեցի խորանի զարդերի մոտից, մենք ծածկեցինք դուռն ու հայտնվեցինք լեռների մթության մեջ:

Ես դժգոհ էի, որ մենաստանիցս ինձ դուրս են քաշել սև ու մռայլ գիշերվա գիրկը: Մատուռի հատակը տախտակամած էր, և այնտեղ ջահեր կային: Իսկ այդ լեռնային վտակները հրաժարվում են հոսել այլ ուղղությամբ, քան մարդու բացած ճամփաներով: Անիտան ասաց. «Չես պատկերացնի՝ որքան լավն էր մատուռդ, երբ մթության մեջ մոտենում էի. կանթեղները շարքով լույս էին տալիս, իսկ ներսն ամբողջ տաքուկ-տաքուկ էր:

— Աստված սիրես, ուրեմն էլ ինչո՞ւ չմնացիր,— ասացի ես:

— Բայց պատկերացրու ախր, քնելու ենք մարագում...— բացականչեց նա:

— Իմ կարծիքով մատուռը շատ ավելի հոգեպարար վայր է,— պնդեցի ես:

— Բայց շատ ավելի կոշտ՝ կողերի համար,— պատասխանեց նա:

Մենք մեծ դժվարությամբ հասանք լեռնագագաթներով շրջապատված մի փոքրիկ մարգագետնի: Անիտան այն թեյնիկ անվանեց: Ես եզրակացրի, որ մտել ենք թեյնիկի քթից և ստիպված ենք լինելու դուրս գալ կափարիչով: Ամեն դեպքում՝ սարերի գագաթները տնկվել էին չորս կողմից, և ես ինձ աննշան էի զգում, ինչպես բզեզը լվացարանի մեջ:

Կանաչների մեջ, բաց դաշտում կանգնած էր մարագը՝ հսկա, մռայլ ու հաստատուն:

— Ես գիտեմ՝ ինչպես պետք է ներս մտնել,— ասաց Անիտան, որ այժմ, երբ խիստ անհաջող տեղավորվելու էինք, շատ ուրախ էր,— իսկ հիմա պետք է ընթրել և թեյ խմել:
— Ձուր որտեղի՞ց պիտի գտնես,— հարցրեցի ես:

Նա ուշադիր ականջ դրեց: Սարի լանջին բարդիները մեղմ սոսափում էին:

— Ձայնը գալիս է,— ասաց նա:

— Այո, իհարկե, որևէ ահռելի անդունդի հատակից,— պատասխանեցի ես:

— Ես կգնամ-կնայեմ,— ասաց նա։

— Դե ահա,— պատասխանեցի ես,— ինչ կարիք կա լանջով իջնել առու կամ ջուր որոնելու այնտեղ, ուր դրա հետքն անգամ չկա։

Խավարի ու լռության պատճառով մենք կիսաձայն էինք խոսում։ Ես մարգագետնով ցած առաջնորդեցի նրան, և քիչ էր մնում ամենաթեք տեղում վիզս կոտրվեր։ Հիմա արդեն խիստ ծարավ էի, իսկ մեզ մոտ միայն մի քիչ շնապս էր մնացել։

— Ամենաներքևում անպայման ջուր պետք է լինի,— ասացի ես։

Անիտան գաղտագողի ու հաղթական՝ ինձ էր հետևում։ Շուտով մենք չլմփացնում էինք փափուկ ճիմի մեջ։

— Անիծյալ ճահիճ,— ասացի ես։

— Բայց արդեն կաթկթոցը լսվում է,— պատասխանեց նա։

— Ի՞նչ օգուտ կաթկթելուց, եթե ջուրը հոտած է։

— Այ թե մխիթարում ես,— ծաղրեց նա։

— Ինձ թվում է,— ասացի ես,— այստեղ մոտերքում պետք է լինի։ Ու եթե հաջողվի ակունքը գտնել...

Չգիտեմ ինչու էր աղբյուրի փոխարեն անհրաժեշտ ակունք ասել, բայց անհրաժեշտ էր։ Ցեխի մեջ խարխափելով առաջացանք ու մթության մեջ հայտնաբերեցինք՝ որտեղից էր բխում ջուրը։ Երբ արդեն լցրել էինք մեր կաթսայիկն ու, ի միջի այլոց, նաև կրկնակոշիկները, քարշ գալով ետ գնացինք։ Ոտքս սայթաքեց, ու ջրի կեսը համարյա թափեցի։

— Այսքանն ինձ լրիվ բավական երջանիկ լինելու համար,— ասաց Անիտան։

— Երանի ինձ համար էլ այդպես լիներ,— պատասխանեցի ես։

— Քեզ տհա՞ճ է, սիրելիս,— վշտացած հարցրեց նա։

Ոտքերս թրջվել ու փայտացել էին։ Չորս կողմը խոնավություն էր ու թանձր խավար։

— Չէ, ամեն ինչ կարգին է,— ասացի ես,— բայց մատուռը...

Վերջապես նստեցինք մարագի ետևև, ուր քամին համեմատաբար թույլ էր փչում, թեյ եփեցինք ու նրբերշիկ կերանք։ Քամին այս ու այնկողմ էր ցրում սպիրտայրոցի բոցը։ Սկսեց անձրև կաթկթել։ Թանձր մութի մեջ, գերանների արանքում կորցրինք նրբերշիկն ու թեյի փաթեթը։

— Վերջապես ես անսահման երջանիկ եմ,— կրկնեց Անիտան։

Զգացի, որ նրա ձայնն ինձ ջղայնացնում է։ Թեյի փաթեթն էի փնտրում։

Նախքան կհասցնեինք ավարտել այս ճոխ ճաշկերույթը, տեղատարափ անձրև սկսվեց։ Շտապով իրերը խցկեցինք ուսապարկերն ու մեզ գցեցինք մարագը։ Առավոտվա համար մի փոքրիկ բոքոն էր մնացել։ Շինությունը փոքրիկ տնակի չափ էր։ Այն կառուցված էր մեկը մյուսի վրա դրված գերաններից, որոնք լավ հարակցված չէին, և եգիպտական այդ մթության մեջ ամեն կողմից լույսի շերտեր էին թափանցում։ Իսկ մարագում մարդ չի համարձակվում լուցկի վառել։

— Ահա այնտեղ դեպի խոշոր մասը տանող սանդուղքն է,— ասաց Անիտան։

Առջևի բաժանմունքը միայն մեկ քառորդով էր խոտ լցված, ետնինը գրեթե մինչև առաստաղը լիքն էր։ Ես սանդուղքով բարձրացա ու ձեռքս հարդի մեջ այնպիսի մի զզվելի կպչուն տեղ՝ խոթեցի, ուր ջուրը տանիքից հոսել էր խոտի մեջ։

— Լրիվ ցեխ է, եթե սրա տերը չհետևի, ամբողջ բերքը փտելու է,— ասացի ես,— գարշելի, անպետք մարագ է։

— Հապա ականջ դիր անձրևի ձայնին,— շշնջաց Անիտան։

Անձրևը կատաղորեն թմբկահարում էր կտուրը։ Բայց հետո, չնայած լույսի շերտերին ու խրճիթով մեկ սուրացող մոտ հարյուր ձիաուժ միջանցիկ քամուն, այնուամենայնիվ, գոհ էի, որ ներսում եմ։

— Հարդը երկու թերություն ունի,— որոշ ժամանակ անց նկատեցի ես,— բոլոր սողացող միջատների պես խուտուտ է տալիս ու ծակոտիներից քամի է թողնում։

— Ծակոտիներից քամի է թողնում,— ծաղրեց Անիտան։

— Այո, այդպես է,— ասացի ես։

Մեծ պատրաստություն սկսվեց։ Բոլոր քիչ թե շատ արժեքավոր իրերը՝ հերակալները, ծնկակապերը, պֆենինգները, հելլերները, մանր-մունր առարկաներն ու ճարմանդները, զգուշությամբ գլխարկիս մեջ հավաքեցի։ Թանձր խավար էր։ Գլխարկս չգիտեմ ուր թողեցի։ Հանեցինք մեր թրջված կոշիկներն ու գուլպաները և մտածելով, թե չգիտես ինչ կերպ, գուցե տաքացնենք ու ավելի շուտ չորանան, խրեցի դեզի մեջ։ Հետո մեր ցեխոտ հագուստներից որոշ բաներ կախ տվեցի՝ հուսալով, որ կչորանան։

— Ես պահանջում եմ, որ գլուխդ անպայման գլխաշորով կապես և բաճկոնս փռես բարձի երեսի տեղ,— ասացի ես։

Անիտան հլու-հնազանդ կատարեց։ Նա չափից դուրս երջանիկ էր՝ մերժելու համար։ Մենք ծածկոց չունեինք, ոչինչ, բացի մեկական անջրանցիկ թիկնոցից։

— Լավ մեծ ծակուռ է,— ասացի ես,— երկու գերեզմանի չափ: Հուսով եմ իսկական գերեզման չի դառնա:

— Եթե մրսես,— ասաց Անիտան,— կսկսեմ ատել քեզ:

— Իսկ եթե դու մրսես,— պատասխանեցի ես,— քնքշորեն կխնամեմ:

— Ախ, սիրելիս,— գորովանքով բացականչեց նա:

Խլուրդների պես փորեցինք-մտանք այդ գերեզմանափոսը:

— Բայց ախր սարի չափ խոտ է դուրս գալիս,— ասաց նա:

— Շատ լավ,— ասացի ես,— գերմանական երևակայությանդ կարող ես հագուրդ տալ՝ դարսելով դրանք ետ ու քնելով տակը:

— Ի՞նչ հրաշալի է,— բացականչեց նա:

— Իսկ որքան ավելի հրաշալի կլիներ գերմանական մի հաստ վերմակ լիներ:

— Վերջ տուր,— թախանձեց նա,— համը մի հանիր:

— Քեզ հաճույք պատճառելու համար խեցգետինների կաթսայում էլ կարող եմ քնել,— ասացի ես:

— Ես չեմ ուզում ինձ հաճույք պատճառես, ես ուզում եմ, որ ինքդ գոհ լինես,— համառեց նա:

— Ախ, աստված իմ, փրկիր, ան-պայ-ման գոհ կլինեմ,— խոստացա ես:

Սկզբում բավական տաք էր այդ տաշտակի մեջ, բայց ստիպված էի ամեն վայրկյան կամ քիթս շփել, կամ ծոծրակս: Այդ հարդն ամենազզվելի ու աներես բանն, էր: Ինչքան էլ փորձեիր ետ քշել, կամ շեղբն էր խուտուտ տալիս քիթս, կամ հատիկն էր կտտալով ընկնում կոպիս, կամ էլ մի խոշոր ցողուն ծոծրակովս ներս էր սողոսկում: Ես Հերկուլեսի պես գոտեմարտում էի, որ հեռու վանեմ, բայց իզուր: Իսկ Անիտան միայն ծիծաղում էր իմ հառաչանքների ու փնչոցների վրա:

— Ինչպես երևում է, քո մաշկն այնքան զգայուն չէ, ինչպես իմը,— ասացի ես:

— Օ՜, իհարկե, ոչ այնպես թարմ ու մաքուր,— ծաղրեց նա:

— Այդպես է, փաստորեն,— հառաչեցի ես: Բայց շուտով նա էլ տնքաց:

— Եվ ինչո՞ւ որոշեցիր բաճկոնդ բարձի տեղ գործածել,— ասաց նա,— դեմքս անընդհատ թևքերից մեկնումեկի մեջ է մտնում:

— Պետք էր ավելի լավ ծալել,— ասացի ես։

Մենք տանջվում ու հառաչում էինք հարդի սատանայական կտտանքներից։ Հետո, տենդագին ցնցումների մեջ, երևի, քնեցինք։

Արթնացա որոտի ճայթյուններից։ Անիտան կառչեց ինձանից։ Ահավոր մութ էր։ Հսկայական շաչող մտրակի պես կայծակը շառաչելով կայծեր էր թափում մեր հոլիկի գլխին. թվում էր՝ դղրդալով գալիս ու ետ է գլորվում լեռնագագաթներից։

— Սա էլ աղն ու պղպեղը,— հառաչեցի ես՝ չափից դուրս քնաթաթախ ապրելու համար։

— Կայծակը մարագների խփո՞ւմ է,— հարցրեց Անիտան։

— Այո, հատուկ դրանց է նշան բռնում, միայն մարագների հետևից է ընկնում կայծակը,— հայտարարեցի ես։

— Դե գիտես ինչ, պետք չէ ինձ վախեցնել,— կշտամբեց նա։

— Քնի՛ր,— հրամայեցի ես։

Բայց նա չէր քնում։ Անիտան, որոտն ու կայծակը, ապա մոլեգնած քամին ու տեղատարափ անձրևը, և ապա՝ հարդի հատիկների համառ, դանդաղ ու դաժան կտտանքը. բոլորը, բոլորը պայքարում էին քնիս դեմ։ Ժամանակ առ ժամանակ աչքս կպչում էր։ Հետո սկսեց ցրտել, որովհետև սառը քամին պատերի գերանների լայն ճեղքերից ներս էր փչում։ Ողորմելի խոտի դեզը չէր կարողանում անգամ տաքացնել մեզ։ Չարանենգ քամին խոտի ծակոտիներից ներս էր թափանցում։ Իսկ Անիտան չէր ուզում թաղվել, նա ուսերն ու գլուխը դուրսն էր պահում։ Այդ կերպ, իհարկե, ցրտից քիչ էինք պաշտպանված։ Ցուրտն ավելի ու ավելի էր սաստկանում, դառնում անտանելի։ Ես ավելի ու ավելի խորն էի թաղվում։ Հետո ձեռքս հանդիպեց Անիտայի մերկ ոտքերին, որ սառույց էին կտրել։

— Այ կին արմատ,— ասացի,— ներս քաշիր այդ ողորմելի գլուխդ ու ծածկվիր, և աշխատիր պահպանել կենդանի ջերմության նշույլը, որ կարող է անջատել մարմինդ։

— Պետք է շնչե՞մ, թե չէ,— գրգռված պատասխանեց նա։

— Դեզի մեջ պետք եղածին չափ օդավետ է,— համոզեցի ես։

Վերջապես սկսեց լուսանալ։ Թանաքագույն-կապույտ շերտերը փոխվեցին մոխրագույնի։ Մարագի չորս պատերի ներսում արշալույս էր։ Արդեն կարողանում էի զանազանել սանդուղքն ու ուսապարկերը։ Դրսում որևէ տեղ ջահելի մեկը, երևի, պահածոյի տուփ է գլորում,— քնաթաթախ մտածեցի ես, մինչև որ այդ միտքը սկսեց ինձ տարօրինակ թվալ, և վերջապես գլխի ընկա, որ ընդամենը երևի, կովի կամ այծի զանգակ է ծլնգում։

— Առավոտ է,— ասաց Անիտան։

— Լավ էլ առավոտ է, խոսք չկա,— տնքացի ես։

— Չե՞ս մրսում, սիրելիս։

— Ուղղակի եփվում եմ։

— Վեր չկենա՞նք։

— Վեր կենանք։ Մեկ է՝ դրանից մի քիչ ավելի ցուրտ ու տհաճ պիտի լինի։

— Ես շատ երջանիկ եմ,— համառեց նա։

— Այո, տեսքիցդ երևում է։

Անմիջապես ահ ընկավ սիրտը։

— Շա՞տ եմ սարսափելի,— հարցրեց նա։ Փաթաթվել էր վերարկուով, ցից-ցից մազերի մեջ լիքը հարդ էր։

Ճտքավոր կոշիկներս քաշեցի ոտքիս ու քառակուսի բացվածքով դուրս սողացի։

— Ախ, շուտ, արի, արի՝ տես,— բացականչեցի ես։

Գիշերն ահագին ձյուն էր եկել։ Ոչ թե ցածում՝ մեր ուղղությամբ, այլ մի քիչ ավելի վերև։ Մենք կես մղոնի չափ հեռու մի խոտավետ տարածության վրա էինք, իսկ շուրջբոլորը բարդիների սևությունն էր խոյանում։ Հետո, կես ճանապարհին, հանկարծ կտրուկ փոխվում էր, ու ձյան ահագին հյուսակները շլացուցիչ ճերմակությամբ բարդբարդվում էին արշալույսի դալկության հանդեպ։ Մեզ շրջապատող ամբողջ վերնաշխարհն ամպերինն էր, սքանչելի կերպով թարմ ու ճերմակ, ու հրճվանքով կայտռուն։ Ինձ թվում էր՝ բավական է վեր վազեմ բարդիների միջով ու կհայտնվեմ բարձունքներին, որոնք իրականում երկնային բարձունքներ էին, ու կքայլեմ երկինքն ի վեր։

— Ո՛չ,— հուզված բացականչեց Անիտան ու աչքերը թրջվեցին,— ոչ։

Բավական լուրջ մի վայրկյան ապրեցինք և այդ ամենը ձյան պատճառով։ Եվ այսօր էլ դեռ հուզվում եմ, հիշելով մեր խոսքերի ու շարժումների արտակարգ քնքշությունը, կարծես աստծո ստեղծած միակ զույգն էինք աշխարհի երեսին։

— Տե՛ս,— գոռաց Անիտան։

Ես կարծեցի, որ առնվազն Գաբրիել հրեշտակապետն է կանգնել կողքիս։ Բայց նա ընդամենը շունչս էր ցույց տալիս, որ դեռ օդին չխառնված՝ սառչում էր։ Այդ ուշքի բերեց ինձ։

— Մ՛մմ... սառնամանիքը,— մնչացի ես,— ախր այն կարող է տառացիորեն փոշիացնել մարդուն:

— Այո, սիրելիս, պետք է թեյ խմել,— հոգածությամբ պատասխանեց նա: Ես վերցրի ջրի կաթսայիկը: Առավոտյան ամեն ինչ ուրիշ տեսք էր ստացել: Ճահիճը հաջողվեց գտնել, բայց ջրի բխելու տեղը գտնել չկարողացա: Անիտան եկավ ինձ փնտրելու: Նա ոտաբոբիկ էր, որովհետև կոշիկները թաց էին: Սառած հնձանով նա եկավ, ձեռքիցս առավ կաթսայիկն ու գտավ աղբյուրը: Ես ետ դարձա ու նախաճաշ պատրաստեցի: Մեր ունեցածն ընդամենը մի փոքրիկ բոքոն էր, մի քիչ թեյ ու մի քիչ շնապս: Անիտան եկավ՝ զգուշությամբ կրելով ջուրը, որ չթափի: Քեֆը, կարծես, տեղը չէր:

— Ախ, այնպես է ցավում,— բացականչեց նա,— այդ սառած խոզանը, սառցե, բութ ասեղների պես ոնց էր ծակծկում:

Ես նայեցի նրա բոբիկ ոտքերին ու գազազեցի:

— Միայն լուսնոտի խելքին կարող էր փչել ոտաբոբիկ իջնել այնտեղ՝ այս պայմաններում,— բղավեցի ես:

«Այս պայմաններում»,— ծաղրեց նա:

— Ավելի շատ պետք է ցավեցներ,— գոռացի ես,— հանցանքն ինչ բան է՝ հիմարության համեմատ:

«Հանցանքը՝ հիմարության համեմատ»,— կրկնեց նա՝ ինձ ծաղրելով: Հետո մոտեցա ոտքերին նայելու: Մենք կերանք հացի խղճուկ պատառներն ու կուլ տվինք թեյը: Հետո Անիտային զոռով համոզեցի հեռանալ: Նա հարդարանքի մի գեղեցիկ արարողություն կատարեց, որ ես անվանեցի «Խիզախ թիրոլուհին», ու վերջապես ճամփա ընկանք: Մեր գլխավերևում տարածված ձյունն ամենուրեք պայծառությունից քրքջում էր: Բայց գետինն ու մեր կրկնակոշիկները թաց էին:

— Ինչ սքանչելի է, չէ՞,— բացականչեց Անիտան:

— Այո՛,— պատասխանեցի ես,— մանավանդ, երբ ոտքերդ թաց են՝ հում կավի պես:

Լրջացած չլմփացրինք մի անորոշ ճանապարհով: Հետո մի փոքրիկ, աղտոտ ագարակ տեսանք և նկատեցինք՝ ինչպես անճոռնի տեսքով մի մարդ մտավ գոմը:

— Սա այնպիսի մի տեղ է, ուր չարագործներ ու ավազակներ են բնակվում,— ասացի ես:

Հետո տեսանք կնոջը: Նա քաթանե կապույտ տաբատով էր, որ գեղջկուհիները աշխատանքի մեջ են հագնում:

— Զգույշ,— ասաց Անիտան,— գուցե նա իր տուալետը չի ավարտել:

— Չեմ կարծում, որ նրա մտքին այդպիսի բան լինի,— պատասխանեցի ես։

Ահավոր ամայի ու լքյալ մի վայր էր սա՝ բարձրադիր, ցուրտ ու կեղտոտ։ Նույնիսկ այդպիսի սառնամանիքին չէր քաշվում իր գարշահոտությունը տարածել լեռնագագաթների տակ։ Բայց ես կամաց-կամաց մոտեցա։

Անիտային տեսնելով՝ կինը մոտեցավ ցանկապատի դռանը։ Նա կապույտ աշխատանքային համազգեստով էր՝ տաբատ ու իրանակալ. տաբատը կիպ գրկում էր կոճերը՝ եռանկյուն թեզանիքով հնաոճ տաբատների պես։ Նա դժգույն էր՝ գրեթե անզգայացած, կարծես այդ հարատև լռությունը նրա վրա անզգայացնող դեղաթուրմի պես էր ներգործել։ Անիտան հարցրեց ճանապարհը։ Շրջակայքում ոչ մի ճամփա չէր երևում, և նա ցույց տալու համար դուրս եկավ՝ առջևից քայլելով տղամարդու քայլվածքով, բայց մի տեսակ հոգնաբեկ ու նկուն։ Կազմվածքն անճոռնի չէր, ծոծրակն էլ՝ կանացի էր՝ փունջ-փունջ փափուկ գանգուրներով։ Նա մեզ ցույց տվեց ներքև տանող ճանապարհը։

— Քանի՞ տարեկան կլիներ,— հարցրի Անիտային, երբ նա ետ եկավ։

— Ի՞նչ ես կարծում, ինչքան կլիներ,— իր հերթին հարցրեց նա։

— Քառասունից քառասունհինգ...

— Երեսուներկու-երեսուներեք,— պատասխանեց Անիտան։

— Ի՞նչ գիտես...

— Համոզված եմ։

Ես ետ նայեցի։ Կինն անկենդան, մեքենայական քայլերով բարձրանում էր թեք արահետով։ Վերևում՝ գագաթներին, փայլում էր շողշողուն ձյունը։ Ագարակի տարածքը կազմող կանաչ փոսորակը բոլորովին լուռ էր։ Կինն էլ, ասես, վարակված լիներ այդ լռությամբ ու անշարժությամբ։ Կարծես, մահանում էր դանդաղ, որովհետև այդ իր տեղը չէր։ Գոմի դռան մոտ տեսա տղամարդուն։ Նա նիհար էր, շիկակարմրավուն ընչացքով և նա էլ օտարության նույն կնիքն էր կրում դեմքին, կարծես լռությունն, ամայությունն ու սարերը նրան էլ էին ճզմել։ Մենք քարաժայռի արանքով իջնում էինք ներքև՝ կիրճի հատակը, որտեղից մի գետ էր հոսում։ Քարափի երկու կողմերից շառաչելով վտակներ էին թափվում։ Մի մասը հասնելով ժայռի ուղղաբերձ պատին՝ երազի պես ցած էր գահավիժում, ինչպես մշուշի միջից արձակված գոտիներ։ Չորս կողմն, ամենուրեք, Պառնասյան խոտ կոչված ծաղիկներն, այնպես ճերմակ ու անմեղունակ՝ աչուկները չռել-նայում էին մեզ, իսկ արքայական թանաքագույն բոգախոտը հատուկենտ փթթում էր այսուայնկողմ։

(Շարունակությունը ջնջված էր)։

Տաքանալու համար սկսեցինք վազել, բայց կարծես մուխս մարել էր։ Ավելի ու ավելի էինք վազում ցած՝ առվակներին համընթաց, որ լցվում էին գեղեցիկ, կանաչ ավազանների մեջ, ապա կրկին շռնդալով գահավիժում ներքև։ Անիտան, ի դեպ,

ուզում էր լողանալ, բայց ես արգելեցի նրան: Այդպես՝ երկու ժամ անընդհատ ներքև վազելուց հետո, դուրս եկանք Գլասիյութի հարթ դաշտավայրը: Այժմ արդեն անձրև էր մաղում՝ խիտ, թանձր անձրև: Մենք մեզ զգեցինք հյուրանոց, որ իրականում անտառապահի տնակն էր: Վառարանում թեժ կրակ էր վառվում: Այնպես որ բավական սուրճ ու գինի խմեցինք և մտանք անկողին:

— Ահա, գիշերն անցկացրիր մարագում, իսկ հաջորդ օրն՝ անկողնում...,— ասացի Անիտային:

— Բայց ուզածս արեցի և ինձ խիստ դուր եկավ,— ասաց նա,— և բացի այդ՝ անձրև է գալիս:

Եվ շարունակեց տեղալ ու տեղալ: Այնպես որ՝ ստիպված եղանք մնալ անտառապահի տանը, որի կինը մի բարի ու հաստատակամ տանտիկին էր: Նա հոգում էր մեր մասին, բայց երեխաներին երես չէր տալիս: Նրանք, մեջքներն արած վառարանին, սուսիկ-փուսիկ նստած էին ու աչքերը չորս արած նայում էին:

— Լավն են ձեր երեխաները,— ասացի ես:

— Վայրենի են,— պատասխանեց նա՝ սաստող հայացքով տարուբերելով գլուխը: Նկատեցի, թե ինչպես տղայի սևորակ աչքերը փայլատակեցին:

— Տղան հորն է քաշել,— ասացի ես:

Նա նայեց որդուն:

— Այո, այո, թերևս,— կարճ ասաց նա:

Բայց գլուխն, այնուամենայնիվ, հպարտ-հպարտ էր պահում: Նրանց հայրիկն, անկասկած, նշանավոր մարդ էր: Այդ ժամանակ նա մեկ-երկու օրով անտառ էր գնացել: Բայց ամեն տեղ նրա լուսանկարներն էին՝ հաճելի, բարեկազմ, ինքնավստահ անտառապահի, որ նկարել էր աջ ոտքը սպանած քարայծին դրած: Եվ շուտով կնոջ սառնությունն արդեն բավական կոտրվել էր, որ ասաց. «Այո, նա Թագաժառանգի առաջին քարայծի որսին է մասնակցել»: Եվ վերջում արտասանեց մեզ նամակի բովանդակությունը՝ նույն այն արքայորդուց.

«Lieber Karl, Ich möchie wissen wie und wann die letzte Gemse geschossen worden»
/Սիրելի Կարլ, հիշում եմ՝ ինչպես և երբ սպանեցի իմ առաջին քարայծը:/